

10148

Գ. ՅՈՒՐԻԿԻՆ

# ԴԱԺԱՆ ՕՐԵՈ

ԹԱՐԳ. ԱՐՄԵՆ ԱՐՄԵՆԵԱՆ

ՄԱՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻԿՈՒՄԱՐԵԱՆ  
1907

891.71  
F-77

21 JUL 2008

30 NOV 2010

Տ. 77

Ա. Ա.

Գ. ԲՈՅՈՐԴԻՆԻ

# ԴԱԺԱՆ ՕՊԵՐ

ԹԱՐԳ. ԱՐՍԵՆ ԱՐՍԵՆԵԱՆ

ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻՍՈՒԴԱՐԵԱՆԻ  
1907

Типографія Х. БАРХУДАРЯНЦЪ, Срѣтенка, Мяснай пер., д. Бѣляева.



2328-51

## ԴԱԺԱՆ ՕՐԵՐ

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ

ՄՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ:

ՆԱԽՐՈՒՄ և ԹԱՐԳՄԱՆՔ:

Երեկոյեան՝ Դունեան, արտասուքն աչքերին, մոտե  
ինձ մօտ՝ ընդունաբանը:

Ես մենակ էի և նոր էի սկսել թէյ խմել: Ամուսինս  
տանը չէր: Երեխաները իրանց սենեակներում զբաղուած  
էին դասերով:

— Տիկին, ի՞նչ անենք, ի՞նչ անենք:

Նա մինչեւ հիմա էլ աւելի շինական է, քան քաղաքայ-  
ին: Նա վլաղիմիրսկի նահանգի գեղջկուցի է: Բարեսիրտ  
է, բայց բթամիտ, գոեհիկ, շարժուածքը դանդաղ յիշողու-  
թիւնը վաս, խօսում է զիւղական ոճով և իրանց յա-  
տուկ՝ ժողովրդական լիզուով: Տանը՝ զիւղացիների հետ  
զերաններ է սղղոցել:

— Ի՞նչ է պատահել Դունեա:

— Եյն ալիկին... Խոհարարուհու մօտ եկել են իւր ըն-  
կերները: Աւսանողներ... Գործադուլ անողներ... Արհեստա-  
ւորներ... Տնէց տուն ման են զալիս... Ճառաներին հա-  
նում են:

— Ի՞նչպէս թէ հանում են: Ես իսկոյն չհասկացայ:

— Եյսինքն... Սպառնում են... Իբր՝ քանի զեռ կենդանի  
ես զուրս եկ, պէտք է ամենքն էլ գործադուլ անեն: Օրա-  
կան էլ երեսուն կոպէկ կստանաս:

— Ախր, այդ հրահեղ:

— Ամեն տեղ տիկին... Ասում են Եառլայի միւս կողմիցն են սկսել:

Եւ նա Հեկեկաց:

— Ախր ուր գնամ... Երեսուն կոպէկ... Դէ, ի՞նչ իմանաս յօէ էն էլ կտան, թէ չեն տալ: Ախր զիւղն ի՞նչով գնամ: Իսկի չես էլ կարող գնալ: Այսօր վերջին ճանապարհն էլ գործադուլ արաւ: Ուսանողները երկիւղ են դցել...

«Ուսանող» խօսքը արտասանելիս՝ նրա ձայնը դողում էր:

Այդ նրա համար աւազակի կամ թալանողի պէս մի բան է: «Ուսանող» խօսքի հետ էլ անբաժան՝ առաջ է զալիս «Ճշուգ» խօսքը:

Խոհանոցում արգէն կրկնում են այդ հրեշային լուրը և ամենքն էլ հաւատում են նրան՝ իրը թէ՝ տեսէք, ուսանողները և ջշուղները կամենում են մեզ ճորտութեան դարձնել և այդ պատճառով աղաները զէպի նրանց ներողամիտ են:

Տէր Աստուած, ի՞նչ անյատակ անդունդ է ժողովրդային խաւարի և մտաւոր աղքատութեան:

Բայց ով է մեղաւոր: Միթէ մենք ամենքս:

Շատ կարելի է... Մինչեանգամ հաւանական է, եթէ ոչ միայն մենք, այլ և մենք:

Ո՞վ մեղանից հոգով նախանձախնդիր եղաւ մութ մասսաները լուսաւորելու:

Միայն պրօֆէսսիօնալ մարդիկ, ժողովրդական վարժապետները և վարժուհիները:

Ահա ես համարում եմ մարդասէր, յառաջադէմ կին, ես՝ նախկին ուսանողուհիս կողմնակից եմ ամենայն իրաւունքների և աղատութեան:

Բայց և այսպէս՝ ես «տիկին» եմ... Ես սիրում եմ զիւղը, ամենայն ամառ զնում եմ մեր ազարակը, արտասուալից սրտով խղճում եմ զեղջկուհիներին, երեխաներին և առ հասարակ բոլորին, յաւում եմ, որ նրանք մնացել են աղքատութեան, մթութեան, ցեխի, անօդնութեան և սարսափելի հիւանդութիւնների մէջ: Նրանց

բժշկում եմ հրապուրանքով և, չշուարելով այն հանգամանքից, որ ես մի քիչ բարձր եմ «ջաղուբազներից», բայց և այսպէս ես հոգով վստահ չեմ նրանց, եթէ ոչ կուլտուրական, գոնէ հոգեկան «վերաճնութեան»:

Զէ որ մեղ մօտ զիւղում, որի մէջ հազար հինգ հարիւր հոգի կայ, դուք չէք գտնիլ մի անգրագէտ զեղջկուհի, (ասենք պառաները անգրագէտ են) որ պատասխանէր գէթ այնպիսի մի հարցի, որ զուրկ չլինի քրիստոնէական կրօնի բովանդակութիւնից, որ զոնէ Սւետարանից, կամ «Գործք առաքելոց» ից էսկան մի բան հասկանար, որ կարողանար մտացածին ասէր «Հայր մեր» ը, կամ «Հաւատոյ հանգանակը» կամ կարողանար հասկանալ թէ ի՞նչ ասել է «Եւ ընդ Քերովքէս» և վերջապէս, որ համգուած չլինի թէ «Խնդա Կոյս» ը մի խօսք չէ կազմում, որ մի էութեան անուն չէ, իբրև թէ «Խնդակոյս»:

Բայց տես, որ ես այժմ տրտնջում եմ Դունեայի և խոհարարուհի Պաշայի վայրենի գաղափարների վրայ: Ախր նրանք գեղջկուհիներ են, զիւղի հօտն են, որտեղ սուրբ Նաստասիային (կամ մի այլ սրբուհու), ժողովրդի մէջ անուանում են «Հաւի աստուած», իսկ Փրոլային և Լաւրային դարձրել են կռապաշտական աստուածներ և համարել են ձիերի ցեղի հովանաւորողներ:

Եւ ահա հասել է հասուցման բոպէն:

Ծառան ամենքիս համար (մինչեւ անդամ բարի և ռամկավարական արամազրուածներիս) ինչ որ օտարոտի է դարձել համարեա թէ մեքենայական, ձիշտ «Աւտոմատ» բուժիչի մէջ գտնուած մեքենայի նման, որ զրսի բաժանմունքներով առաջ է բերում թիքաներ և բաժաներն ու գաւաթները լցնում զինով ու զարեջրով:

Միթէ մենք եղբայրներ ու քոյրեր ենք: Կամ նրանց հետ հաւասար իրաւունքներով քաղաքացիներ ենք: Եւ կամ նրանց հետ «ընկերներ» ենք, ինչպէս զոշում են սոցիալգեմակատները՝ վառուած բանուորական համերաշխութեան զգացմունքով:

Մենք նրանց համար միենայն «տերերն» ենք, այսինքն՝ կապիտալի միենայն ներկայացուցիչները, ոչ լաւ՝ «աղա»

վաճառականներից ու գործարանատէրերից:

Ներկայ ժամանակի համեմատ՝ նրանց գրութիւնը աւելի ծանր է, քան գործարանական «պրօլետար» -ի, որոնք կարողացան միանալ և պաշտպանել իրանց պահանջները: — Դունեա, սեղանը պատրաստեցէք... Դունեա, այս գուրս բերէք, այն շուտով հասցրէք... Զհանուէք, ու մեզ սպասեցէք մինչև ժամի 4-ը: Առաւօտեան ժամի 6-ն վեր կացէք: Զհամարձակուէք հիւրեր ընդունելու: Տնից կարող էք հեռանալ շաբաթը մի անգամ, այն էլ պիտի վերադառնաք ժամը 10-ից առաջ:

Ութ ժամուայ աշխատանք. — սա բանուորների այժմեան զիստար պահանջն է:

Բայց մեր ծառան... քանի՞ ժամ է նա ոտքի վրայ լինում: Նա ապրում է «ասածի» նման՝ «ոչ գործ կատարիր, ոչ էլ գործից փախիր»: Երևի տասնուվեց ժամ:

Սրտասահմանում, երբ ես ջրերն էի գնացել գերմանական մի լրազրի մէջ կարգացի, որ Սկանդինավիայի նշանաւոր զրագույն բրիտանէ քաղաքում մի սրճարանի սպասարի՝ մի օր ու զիշեր ժամանակով տուել է «պազօմետր» ը, այսինքն քայլերի չափը ցոյց տուող ժամացոյցը:

Նա մի օր ու զիշերուայ մէջ անցել էր տասն ու հինգ հազար քայլ: Իսկ տասնու հինգ հազար քայլը մի կիսմետը է, ուրիշն մեր չափով աւելի քան վաթսուն վերստ: Եւ սա մի փոքրիկ պետութեան մայրաքաղաքի սրճարանում: Բայց ի՞նչ կանէ նա՝ պարիզում՝ «Café Riche» կամ «Café de la Paix» սրճարաններում:

Զէ՞ որ իմ ամուսինն էլ մարդասէր մարդ է և պաշտպանում է «գեմոկրատիական պլատֆորման» բայց օրերումը նա պարզապէս, գարշանքով ու հեզնութեամբ պատմում էր թէ ինչպէս Պետերբուրգում՝ Անգլիական ակմբանոցում սպասաւորները բեխերի պատճառով գործադուլ են արել:

Զէ՞ որ, աղայական տներում և առաջնակարգ ակմբանոցներում, սպասաւորները պէտք է սափրեն՝ թէ երեսները և թէ բեխերը: Իսկ այդտեղ երկու համարձակները ներկայացել են բեխերով: Այդ բոպէին ակմբանոցի բոլոր

«gross donnets» զայրացել են և խոկցն խիստ հրաման է արուել «բեխերը սափրելու», բայց սպասաւորները պատասխանի տեղ ու սորութիւն ու արել:

Եւ բոլոր բարձրաստիճան պարոնները, գեներալ-աղիւտանանները, պետական խորհրդի անդամները, դեսպանները, սենատորները, իշխաններն ու կոմսները և պալատական զանագան աստիճանի ծառայողները մնացել են խառնիշը փոթ գրութեան մէջ:

Ի՞նչ անել... Մնում էր, որ իրանք, բեխերը սափրելով, (բայց չէ՞ որ բեխերը պարտաւորուած սեպհականութիւն է ամեն մի պալատականի, թէկուզ արք պետականի համար) և ֆրակ հագնելով, հերթով ծառայեն իրանց՝ ակմբային ընկերներին. ամաններ փոխեն, կողէկ մատուցանեն, անձեռոցով սրբեն յատակի վրայ թափուած սելտերեան ջուրը:

Չուարժալի տեսարան կլինէր:

Դէ, այդպէս կարող է պատահել մեզ՝ բոլոր «աղանելին» հետ՝ կամ այսոր կամ վաղը:

Մեր սպասաւորը՝ Բօլեսլաւը, ինչպէս լեհացի, ոչ մի վեպքում մնացեալ ծառաների հետ չէ յարմարուում: Այսօր նա ինձ մտերմաբար հազորդեց միւնոյն բանը, ինչ որ ասել էր Դունեան:

— Զերդ գերազանցութիւն, ուսանողները ման են գալիս բնակարանները ու ծառայողներին գուրս են հանում:

— Ես լսել եմ, Բօլեսլաւ:

— Ես նրանց ցոյց կտայի, թէ ինչպէս պիտի խռովեցնել ժողովրդին: Մենք ձեզանից լիովին գոհ ենք: Ես նրանցից հօ չեմ վախում, բայց կանայք լաց են լինում... Նրանց կարելի է վախեցնել...

Այդ սպասաւորը աղքատացած ու անյայտութեան մէջ ընկած ազնուականներից էր: Եւ նրա հոգին գեռ մնացել էր «աղայական»: Նա սարի նման կանգնած էր արող կարգերի համար: Թէկայտ նա ուս մներին չէր սիրում, բայց մեղ՝ աղաներիս աւելի մօտիկ էր քան ծառաներին:

Երկու կանայքն էլ աղայինը և խոհարարուհին ատում են նրան և կարծեմ երգուել են «քաշ զցել» նրան:

Այդպէս էլ նա է նրանց հատուցանում և ես վախում  
եմ չլինի թէ վերջը առաջ գայ մի արիւնոտ ընդհարում:

Օդի մէջն էլ «գործադուլներ» են: Իմ երեխաները՝  
իմանեան և Վօլոդեան աշա քանի ժամանակ է սկսել են  
խցս տալ ինձ հետ մտերմաբար խօսելուց:

Մանեան թէպէտ տասնուշորս տարեկան է, բայց նա  
արգէն մեծ աղջիկ է երեում: Նա մինչեւ վերջին ժամա-  
նակն էլ ամեն բան «սերտող» է, բնաւորութեամբ քըն-  
քոյշ է, մարմնով ու սրտով էլ ճշկուն: Ընդհանրապէս  
նրանից ստացած տպաւորութիւնը ախորժելի է: Նա ստա-  
նում էր լաւ թուանշաններ, ընկերուհիներից սիրուած  
էր՝ սիրով էլ յարմարում էր զպրոցական «պետական»  
կանոններին, և շատ երբեմն էր ծիծաղում վերակացու-  
հիների կամ նոյն խսկ տեսչուհու վրայ:

Այժմ նրա մէջ նկատում է մի տեսակ յուղմունք:  
Նա զառել է ծածկամիա, խսկ եթէ մի բան ասէ, այն էլ  
կլինի մի խառնուրդ:

Ինքն ու եղբայրը սկսել են ինչ որ բանի համար փըս-  
փսալ: Բայց երբ ես ներս եմ մտնում, նրանք կամ յռում  
են կամ փոխում են խօսակցութիւնը:

Շատ յաճախ պատահում եմ նրանց հայեացքներին,  
որոնք ձրգում են ինձ վրայ՝ իհարիկ ոչ ուղղակի, այլ  
ծուռ կերպով: Ես այդ հայեացքների միաքը կարողացայ  
կարգալ:

«Թէ, մայրիկ, հիմա մենք կտեսնենք թէ՝ զու և հայրիկը  
ի՞նչպէս պիտի պահէք ձեզ: Օդի մէջ ուրիշ հոտ է գտ-  
լիս: Մենք ես «քաղաքացիներ» ենք և ոչ «տղաներ» ու  
«աղջիներ»: Ահա հիմա մենք կտեսնենք թէ՝ զու ի՞նչ  
պէս կվերաբերուի թէ՝ զէպի մեր աւաօնո միան թէ զէ-  
պի մեր պլատիորման:

Ուղղակի այդ խօսքերն են նրանց հայեացքներում:

Աւտօնոմիա:

Ես նրանց երեք չեմ կշտամբել նրանք վաղուց սո-  
վորել են ընդունել մեզ՝ երկուսիս՝ և մանաւանդ իրանց  
մօրը, իրեւ ընկերների և ոչ իշխանաւորների կամ տնայ-  
ին վերակացուների ու սահմահարողների:

Ուսումնարան գնալով, նրանք մեղանից չեն հեռացել  
ընդհակառակն աւելի մօտեցել են: Որովհեաւ ինչ էլ որ  
նրանք այնաեղ քաշել են, ինչքան էլ ծանր բան են տե-  
սել իրանց իշխանաւորների և կամ ընկերների մէջ, տանը  
միշտ հանգստացել են:

Այժմ իմ ամենամեծ պարզեն այդ պատասխանն էր.  
և այդ այն բոլոր հոգսերի և մոքերի փոխարէն, որ ես  
մացրել եմ նրանց հոգեկան կեանքի մէջ:

Հիմա էլ երեխ զիմնազիւան բանում է նրանց: Նրանք  
ոյժ են զզացել իրանց մեծութեան և իրանց «վեհաժո-  
ղով»ի մէջ:

Երէկ Մանեան եղբօր հետ խօսակցութիւն ունենալուց  
յեայց փափուկ շըմունքներից թայրեց.

— Մենք կամենում ենք Լիզկային վեր քաշել:

— Ո՞վ է այդ լիզկան, հարցրի ես:

— Վերակացուհին — Ելիզաւետա Մատվէեվնան:

Ես լուցի՛, բայց Վօլոդեան ծիծաղեց:

«Վեր քաշել» բոլորվին նոր զարձուածք է: Դա նման  
է ռուսական այն թարգմանութեան, որին ուսանողները  
Պարիզում՝ անուանում են «Conspuer en tel»:

## II

Տէր Աստուած, ինչպէս ամեն բան արագութեամբ քան-  
գում է:

Ի՞նչ է կատարում քաղաքում, մենք չենք տեսնում,  
այլ զիտենք միմիայն ինչպէս լուրեր, այն էլ մէկը միւ-  
սից սարսափելի: Մենք արգէն նստած ենք տանց լրազրի:  
Շուտով էլ ոչ լոյս կլինի, ոչ ջուր, ոչ միս, ոչ կաթը:  
Եթէ ոչ այսօր, վաղն էլ մեզ կանջատեն ամբողջ Շու-  
ստանից: Ոչ մի Ճանապարհ էլ չի լինելու:

Մօտենում է ինչ որ անողոք — տարերային և յաղթա-  
կան բան: Դա աւելի ուժեղ է քան բունթը, աւերումը  
և փաղացային անկարգութիւնները:

Զրկել շարժուելու կարողութիւնից, սահսկել ապրել ինչ  
պէս պաշարուած բերդի մէջ և սպասել...

Եւ մեղ երկուսիս՝ թէ իմ և թէ ամուսնուս մէջ՝ այդ  
յուղմունքը առաջ է բերել մի շարք հակասական գաղա-  
փարներ, զգացմունքներ, տրամադրութիւններ, բողոքներ և  
երկիւղներ:

Ի՞նչ մեզումեղ խարենք: Այս, երկիւղ:

Ինձ համար—շատ ծանր կլինի կասկածել որ և է յան-  
ցանքի մէջ իմ երեխաների հօրը—մի մարդու, որի հետ  
ևս կապել եմ իմ վիճակը: Մենք ամուսնացել ենք սի-  
րահարուելով: Եւ մինչև օրս մեր մէջ մի այնպիսի տա-  
րածայնութիւն չի եղել որ հիմնուած լինի որ և է սկըզ-  
բունքի վրայ: Առաջ էլ պատահել է, որ ամուսինս խօ-  
սել է Հաւատացողի ձեռվ:

Երեխաները կրթելու մէջ՝ ինձանից խիստ է: Նա զրւ-  
խաւորապէս ճգնել է, որ երեխաները հեռու մնան զանա-  
զան ձեի կապկութիւնից, երամական յափշտակութիւնից  
և «թութակային» շաղակրատութիւնից:

Նա ամենեին չի յափշտակում այն նորագոյն գէպքե-  
րի բանկումով՝ որ սկսել է տիրել մեր գալրոյներին՝ թէ  
բարձրին, թէ միջնակարգին: Երէկ՝ ուսանողական անկար-  
գութիւնների մասին խօսելիս, նա ասաց.

— Այդ ուսանողուները երեակայում են իրանց դիկտա-  
տորներ: Երկու—երեք օր էլ որ անցնի, նրանք Մոխովայա  
փողոցում կկազմեն հասարակական փրկութեան կոմիտէ:

— Դրա նման մի ինչ որ բան կայ. նկատեցի ես:

— Հոգով՝ մինչև հիմա էլ ես ինձ ուսանող իմ համարում:  
Բայց ամեն ինչին սահման կայ: Նրանք ի՞նչ են կամենում  
անել մեր ալմա մատերի հետ: Մի յեղափոխական օթևան:

— Զէ մի՛ օթևան... Ընդհատեցի ես:

— Հապա ի՞նչ: Երկուսից մէկը. կամ պէտք է համալսարա-  
նական գիտութեան որդեգիրը լինել, կամ սովորական  
քաղաքային բնակիչներ: Էլ ի՞նչու համար ուսանող դառ-  
նալ, նշանազգեստը հագնել և աւտոնոմիայի ձգտել: Մի-  
այն նրա համար, որ այսպիսի վճիռ կայացնեն: «Լեկցի-  
աները», յամենայն դէպս, մենք համաձայն ենք լսելու, բայց  
պահանջում ենք, որ համալսարանը գոյութիւն ունենայ-  
առելի շուտ յեղափոխական պրոպագանդի համար:

— Ի՞նչ արած, որ ընդհանուր ոգին այդպէս է:

— Բայց այդ մահ է ամեն դիտութեան և ակադեմիական  
աղատութեան:

Ես ժպտացի:

— Գիտութեան մասին ով է մտածում: Հարցը ի ես: Եւ  
ով է մեղաւոր, որ ուսանողները և գիմնազիայի աշակերտ-  
ները բռնկուած են այդ հասանքով:

— Ի՞նչի հոսանքով:

— Յեղափոխական: Խօսքից չպիտի վախճնք: Միւնցն հո-  
սանքով՝ որ այժմ անցնում է ամբողջ Ռուսաստանի երե-  
սով:

— Ո՞վ է մեղաւորը: Համարեա զայրացած բացականչեց  
ամուսինս:

— Իշխանութիւնը: Մարսափելի «փորակերներ»ը, ինչպէս  
անուանում են գիմնազիայի աշակերտները: Փթած կողմի  
սարուկները: Յետոյ մենք՝ բոլորս:

— Մենք՝ ով. աւելի կրքով զռուաց նա:

— Մենք՝ ծնողներս... Հայրեր և մայրեր:

Մենք չկարողացանք հին սիստեմը փոխել: Միայն այժմ  
են մեզ թշլ տալիս խորհրդների մասնակցել:

— Մենք մեղաւոր ենք, եթէ մեր որդիքը մանելով համալ-  
սարաններ, կամ ուրիշ բարձրագոյն գալրոյներ, արդէն  
պատրաստ են...

— Պատրաստ են: Ի՞նչի:

— Յեղափոխական շարժումների: Այդ մեր սնանկութիւնն  
է: Այնպէս, ինչպէս և իրանց տեսչութեանը: Եւ իսկա-  
պէս մեր երեխաները՝ այստեղ տանը՝ ի՞նչ կարող են սո-  
վորել, երբ նրանք լսում են մեծերի խօսակցութիւնը և  
մինչևանգամ մասնակցում նրանց:

— Ոչ մի ժամանակ էլ ես ոչ մի բան չեմ քարոզել: Ոչ  
մի ժամանակ ես այն կարծիքի չեմ եղել թէ հմալսա-  
րանը պէտք է դառնայ հասարակական միտինգների վայր:

— Բայց նրանք տեսում ու հասկանում էին, որ դու և  
ես մեռնող բիժիմը ընդունում էինք զայրոյթի արժանի:  
Մեր լեզուն չափաւոր էր, բայց և իրողութիւնը յեղափո-  
խական էր: Եւ աշա պէտք է մենք դրա համար հատու-

ցանենք և... Ամուսինս ընդհատեց ինձ ու ասաց:  
 — Դու այդ ասացիր... Մի տեսակ չարախնդութեամբ:  
 — Չգիտեմ: Բայց ինձ համար այս պարզ է. հատուց-  
 ման օրը հասել է:  
 — Ինչո՞ւ համար, ի սէր Աստուծոյ. գոչեց նա:  
 — Երկերեսութեան համար: Նրա համար, որ մենք մեղ-  
 երեակայում ենք արմատականներ, մինչևանդամ յեղափո-  
 խականներ, բայց ապրում ենք ինչպէս բուրժուա և ինչ-  
 պէս անհաւասարութեան, կապիտալիզմի և աշխատաւոր  
 դասի ստրկայցման կողմնակիցներ:  
 — ՄԵ՞նք, քեզ հՅ՞տ:  
 — Այո, այո:  
 Ես սաստիկ զրգուեցի և զուցէ աւելի ուժեղ առաջ գնայի,  
 բայց այդ բոպէին Դունեան ներս մտաւ ու երկու այցե-  
 առմա տուաւ:  
 — Դրանք օրիորդներ են, խնդրում են իսկոյն ընդունել.  
 ասաց նա:  
 Մի այցետոմսի վրայ ես տեսայ ինձ ծանօթ անուն. Սպի-  
 րիդոնովա:  
 Դա ուսանողուհի է, դաւառիցն է, իմ ընկերուհու  
 աղջականն է: Անցեալ տարի նա ինձ մօտ եղել է երկու  
 անգամ: Գեղեցիկ, տաքարիւն աղջիկ է, կարծեմ սոցի-  
 ալ-գեմակրատ է:  
 Միւս աղջանունն ինձ համար բոլորովին անծանօթ էր:  
 Ամուսնոյս հետ մենք վիճում էինք իմ բանուորական  
 սենեակում:  
 — Երկու ուսանողուհի են եկել ինձ մօտ, կարող եմ հս  
 նրանց այստեղ ընդունել:  
 — Խնդրեմ, ես չեմ խանդարելու:  
 — Ես քեզ չեմ հեռացնում, զուցէ քեզ ել հետաքրքիր  
 լինի:  
 Նա ոչինչ չպատասխանեց, բայց նատեց և սկսեց ծխել:  
 — Դունեա, այդ օրիորդներին ինդրեցէք այստեղ:  
 Առաջինը մտաւ. Սպիրիդոնովան: Նա բարձրահասակ  
 էր, վայելուչ կազմուածքով, թխահեր, ամբողջովին սե  
 ու նոր տարազով կարած հազուստի մէջ: Նրա յետեկց

մտաւ իւր ընկերուհին—աղջանունը Սամակատովա. տղեղ,  
 կարձ մաղերով, ակնոցներով—ուսանողուհու տիպար, որի  
 նմանը իմ ժամանակներն էլ կային, հագնուած է աղ-  
 քատ և անփիթութեամբ:  
 Նրանց այցելութեան պատճառն էր՝ նուիրատութիւն-  
 ներ ժողովել մի ինչ որ «Համակուսակցական կոմետէի»  
 օգակն: Կուրսերում մեծ յուղմունք է տիրում: Եթէ ոչ  
 այսօր, վաղը նրանք կիակուին:  
 Նրանք ինձ իսկոյն տաք խօսակցութեան մէջ մացրին:  
 Այդ բոպէին նրանց համար ամենաեռուն կենսական հար-  
 ցը պրօֆէսօրների վրայ ունեցած դատն է: Նրանցից մէկի  
 վրայ շատ ծանր յանցանքներ են ընկած:  
 Իմ ամուսինն էլ մասնակցեց խօսակցութեան: Այդ  
 պրօֆէսօրը մի ժամանակ նրա աւագ ընկերն է եղել:  
 — Ի՞նչի մէջ էք նրան մեղաղում: Հարցրեց նա:  
 — Նրա քաղաքական վարքի անմաքրութեան մէջ: Մի  
 շարք փաստեր կան, որ այդ ապացուցանում են. պատաս-  
 խանեց Սպիրիդոնովան վրգովուելով:  
 Նրա սե ու խոշոր աչքերում նշմարւում էին կայծեր:  
 — «Անմաքրութիւն» խօսքը ծանր կշռադատելի է և մի-  
 ևնդյն ժամանակ մութ:  
 — Դատը կիայանայ մօտակայ ժողովում. ասաց ակնոցնե-  
 րով ուսանողուհին: Եւ եթէ նա վաղն երեայ դասախօսու-  
 թեան, մենք նրան թցյլ չենք տալ խօսելու:  
 — Դէ, լսւ, ընդմիջեց ամուսինս. զուք իրաւունք ունիք  
 պրօֆէսօրից սպասել գիտութիւն և դասախօսութեան  
 տաղանդ, բայց նրա անձնաւորութիւնը պիտի աղատ լինի  
 յարձակումներից:  
 — Մենք չենք կարող ամբիոններից լսել ակնյայտնի յե-  
 տաղէմներին:  
 — Սպասեցէք, ոլքան ինձ յայտնի է. շատ վաղուց չէ,  
 որ այդ միւնցն պրօֆէսօրը ամենքի սիրելին էր:  
 — Ինչ որ եղել է, այն անցել է, ասաց ակնոցաւոր ու-  
 սանողուհին: Ամենքի զինը որոշելու ժամանակը հասել  
 է: Նրա տաղանդի մասին մենք չենք բացասում: Բայց  
 այդպիսի պարոնների հոգին իսկական բուրժուայի հոգի

է եղել, ծածկուած սիրուն ձառերով։ Այժմ նրանք իրանք  
իրանց մատնեցին և շատ լաւ եղաւ։

Խօսակցութիւնը կարող էր փոխուել սուր վիճաբանու-  
թեան։ Ես նայեցի ամուսնուս վրայ մի առանձին հայեաց-  
քով։ Նա կանդնեց, զլուխ տուաւ և, զրեթէ հեղնութեամբ,  
ասաց.

— Եթէ այդպէս շարունակուի, այն ժամանակ դուք պէտք  
է ձեզ մօտ մշամական—յեղափոխական ամբիոն Հիմնէք,  
ինչպիսին որ կար Պարիզում, տերրորի ժամանակներում։

— Մենք այդպիսի պրօֆէսօրներին միջոց կտանք իրանց  
արդարացնելու, պատասխանեց Սպիրիդոնովան՝ իրան բա-  
ւական զսպելով։

Ամուսինս գնաց։ Ես մնալով նրանց հետ, ամենայն  
քաջութեամբ դարձայ նրանց ու ասացի։

— Ես պատրաստ եմ զոհել ինչ որ կարող եմ բայց  
նախօք կկամենայի իմանալ այդ ի՞նչ «Համակուսակցա-  
կան կոմիտէ»։

— Նա կանոնաւորում է ամեն մի շարժում։ պատասխա-  
նեց նրանցից մէկը։

— Եւ նրա վճիռները պարտաւորեցուցիչ են ամենքին  
համար։

— Անպայման. ասաց ակնոցաւոր աղջեկը։

— Ներեցէք, ես այդ տեսակ գերիշխանութիւնը համակ-  
րելի չեմ համարում։ Այդ միենցն միահեծանութիւնն է,  
միայն թէ յեղափոխական։

— Այլ կերպ չի կարել, ասաց Սպիրիդոնովան։

— Ցաւում եմ։

— Դուրս եկաւ մի անյարմար զրութիւն։ Նրանք դուրս  
գնալիս՝ երկուսն էլ իրար եաեից ասացին, որ իրանք  
մտալիր չեն բռնաբարել իմ խիզքը։

Բայց նրանց դէմքերը արտայայտում էին բաւականի  
գարշանք դէպի իմ բուրժուական յետակիմութիւնը։

Ես նրանց ուղեկցեցի մինչև հաշար։ Այնտեղ՝ ակնոցա-  
ւոր աղջեկը, ոչ մէկի վրայ չնայելով, ասաց։

— Ի՞նչ նրբութիւնների ժամանակ է, երբ այսօր, հա-  
ւանական է, որ տեղի ունենայ կոտորածը։

— Ո՞րտեղ վախեցած հարցրի ես։

— Այդումը, արձանի մօտ, կամ հէնց Տվերոկայա փո-  
ղոցի վրայ։

Իմ կրծքի վրայ ասես սառուց զրին։

«Բայց իմ երեխան։ Ախր տաք գնղակը կարող է նրան  
էլ համնել»։

### III

Ճաշի ժամը վաղուց լրացել էր, բայց ոչ Մանեան կար,  
ոչ Վոլոգեան։ Ես և ամուսինս սկսեցինք անհանգստանալ։

Ամուսինս յանդիմանեց ինձ թէ ես աղջկանս մենակ բաց  
իմ թողնում։ այն էլ այսպիսի խառնիշփոթ օրերին։

Բայց փոքր չէ։ Դեռ մի տարի առաջ նա խնդրեց ինձ,  
որ իրան թոյլ տամ առանց աղախնու դուրս գալու։ Ես  
էլ թոյլ տուի։

Իմ նրա հետ մի ողբերգական բան է պատահել, միե-  
նոյն է մեր Դունեան չէր փրկելու նրան։

Սրտիս խորքում ես էլ համաձայն էի ամուսնուս հետ  
և որդին ինձ կրծում էր։

Առաջինը եկաւ Վոլոգեան՝ զրգուուած, մաղերն անկարգ  
դրութեան մէջ գոտին էլ կորցրած։

Իմ երեխանները սուտը չպիտի ասեն։ Ես նրանց միշտ  
այդպէս եմ սովորացրել։ Տանը նրանց ոչոք ոչ մի բանի  
համար հարց ու փոքր չի արել, բայց և այսպէս նրանք  
սովոր չեն որ և է բան ծածկելու։

— Դու որտեղ էիս։  
Նրա աչքերը վառւում էին։ Թշերն էլ նոյնպէս։

— Մայրիկ, ես... ես մասնակցում էի ցոյցերին։  
— Ատրճանակից կրակել էք։

— Այո, կրակել ենք։  
— Դու ի՞նչպէս համարձակուեցիր։

Ես այնպէս վրդովուեցի, որ, կարծես, պատրաստ էի  
նրան մի լաւ ապտակ տալ։

— Մեղ զպոցից արձակեցին, մայրիկ։ Ընկերներս ինձ տա-  
րան ու յանկարծ մենք ընկանք ամբոխի մէջ։ Դաղախնե-

րըն իջան ձիերից ու սկսեցին կրակել՝ դէպի տան յարկերի տակ ընկած օթեակները, որտեղ տեղաւորուել են հայթուխ բանուարմաները։ Ամենքիս էլ այդ շատ բարկացրեց։ Մենք գոռացինք «մարսելեող»։ Նրանք թափուեցին մեզ վրայ։ Մարակի հարուածը հասաւ իմ մէջքին։ Մի դաշտախ բանեց օձիքս ես ազատուեցի։ Գոախս էլ, ինչպէս անուամ ես, կարուեց։

Այդ բոլորը նա պատմում էր արագութեամբ, բայց առանց մի փոքր երկիւղի։

Կարծես մէկը՝ մի ակնթարթում փոփոխել էր ի՞մ Վօլոգեային։

Հայրն էլ յարձակուեց նրա վրայ։ Ես վախեցի, կարծելով թէ նա կսփէ նրան։

— Լոիր, հայրիկ, ընդհատեց նրան Վօլոգեան։ Միթէ այդ քստմնելի չէ։ Միթէ դարշելի չէ մի տան վրայ կրակելը։ Եթէ միայն կրակէին նրա վերին մասերին, ուր անդառուած էին գործադուլ անողները, բայց անխափը կրակել տան բոլոր յարկերին... Մնացեալ բնակիներն ի՞նչով են մեղաւոր։

— Բանը զրա մէջ չէ։ Ախր դու ի՞նչպէս ընկար ամբոխի մէջ։

— Մեղ արձակեցին։ Ես էլ ընկերներ ունիմ։ Մենք որոշել էինք դասադուլ անել։ Անկարելի է սովորել։ Անկարելի է նստել յունական քերականութիւն խճածել երբ զրսում գոյութիւն ունին այդ անսակ ստոր վարմունքներ։

Նա ամբողջովին կարմրել էր։ Նրա փափուկ շրթունքներին խաղում էր բարկութեամբ լի ծաղը։

— Բայց ահա մենք քեզ կիողպէնք. գոռաց հայրը։

— Կիողպէ՞ք։ Չէ, գուք այդ չէք անիմ։ Ես էլ անձնաւորութիւն եմ։ Ասենք միևնույն է։ Մայրիկ, դարձաւ նա դէպի ինձ. ես ցցցերի մասնակցող էի, թէ սովորական անցորդ։ Միթէ զազախների վայրենի օրդան ջոկջըկում է։ Դուք երկուսդ էլ կարող էիք վնասուել։

— Բանը զրա մէջ չէ, գոչց հայրը։

Եւ... լոեց։

— Մենք առանց քեզ քաղցած նստել էինք։

— Ներիր, հիմա այսպիսի ժամանակ է։

— Պէտք է քեզ առանց ձաշի թօղնել։

— Թողեցէք։

Նա երբէք այդ ձեռվ չէ արտասանել։

Ամուսինս նայեց ինձ և ոչինչ չխօսեց։

Սեղանի մօտ մենք նստել էինք ինչպէս պատժուածներ։

Մանեան գեռ չէր վերագարձել։ Երկրորդ, երրորդ կերակու-

րըն էլ մատուցին։

Ամուսինս նայում էր ինձ վրայ անհանգիտ և կատաղի հայեցքով։ Այդ հայեցքի մէջ զեռ միւնցն յանդիմանութիւններն էին։

«Դու ես մեղաւորը։ Բոլորը քո չափազանց սէրն է դէպի կանանց ազատութիւնը։ Աղջկանը թողնել մենակ։ զէ, գնա այժմ ուրախացիր։

Նա նկատելի կերպով սպրդնել էր։

Ես հէնց սկսեցի հարց ու փորձ անել Վօլոգեայից, բայց ամուսինս իսկոյն ընդմիջեց։

— Ո՞քան ժամանակով են ձեզ արձակել, հարցրեց նա Վօլոգեայից դեռ միւնցն բարկացած ձայնով։

— Երկք օրով։ Միւնցն է, մենք վճռել ենք զասադուլ անել։

— Մենք ով։

— Երկք՝ բալձր դասարանների աշակերտաներ։

— Ի՞նչ էք արել, միտինք էք ունեցել թէ ինչ։

— Այս, ժողով։

— Դրա համար էլ ձեզ արձակել են։

— Եթէ ուզում ես, հէնց զրա համար։

Այդ բոլորը Վօլոգեան ասում էր իւր խօսակցութեան նոր շեշտով առանց ձայնի ցնցութիւնով, զրական ոճով և աւելի հանդարտ արտասանելով։ Ոչ այնպէս ինչպէս առաջ էր։

— Շատ լաւ։ Ի՞նչ վճիռներ էք կայացրել. հեղնօրէն հարցրեց ամուսինս։

— Այս, հայրիկ։

— Ախր ի՞նչ վճիռներ։

— Մի քանիսը։ Ամենքից առաջ երեք քաղոքական։



— Ասացէք, ինպես: Իհարկէ «ըսրս պոչաւորի» հաշուին  
Վօլոգեան քմծիծաղ տուաւ:

— Այս, «ըսրս պոչաւորի» հաշուին էլ:

Այդ խօսքը նրանք զործ են ածում՝ ընդհանութ, հա-  
սաւար, ուղղակի և գաղտնի քուէարկութեան վերաբեր-  
մամբ:

— Իսկ ձեր զպրոցական զործերի վերաբերմամբ: Թու-  
նալից ոճով ընդգծեց հայրը:

— Առաջինը՝ ուսուցիչը կամ դաստիարակը, եթէ կամե-  
նան ներկայ գտնուիլ մեր ժողովներին, այդ ոչ այլ կերպ  
եթէ ոչ մեր համաձայնութեամբ: Նրանք ոչ մի ձայն չն  
ունենալ ոչ իսկ կարող են լինել խորհրդատու:

— Հա, հա, հա... ծիծաղեց հայրը և մի այնպիսի շար-  
ժում արաւ, որ կարծես թէ կամենում էր բռունցքով  
խփել Վօլոգեայի ծոծրակին:

Հաշտում լսուեց զանդակի սուր և արտաքոյ կարգի  
ձայնը:

Ես վեր թուայ: Սիրտս իսկոյն թուլացաւ:

— Այս Մանեան է: Տէր Աստուած:

Դունեան իսկոյն չվաղեց խոհանոցից: Ես վագեցի հաշտի  
դուռը բաց անելու: Ծնկներս դողում էին:

«Եթէ յանկարծ ներս բերեն Մանեայի դիանկը...»

Մանեային ներս է մտցնում մի ուսանող:

Ես նետուեցի դէպի նա և լաց եղայ:

Նա դալիացել էր, քոնքից արիւն էր կաթում: Գրլ  
խարկ չունէր: Արնաթաթախ՝ մի սե թաշկինակով կա-  
պուած էր ձախ ականջը:

— Մայրիկ, մի վախիր:

Ոչ իմ կրծքին ընկաւ, ոչ էլ լաց եղաւ: Նա դեռ ինձ  
ներկայացրեց իւր ուղեկցին:

— Ահա, ինձ ով փրկեց, մայրիկ:

— Ուսանող Տօպօրկով, ծանօթացրեց նա իրան:

Նրա գլխարկն ամբողջովին կեղտոտուած էր: Վերարկուն  
ցեխոտ, պատառոտուն փէշերով: Մազերն անկանոն թա-  
փուել էին ձակատի վրայ:

— Մանեան վերագարձել է, կանչեցի ես՝ դէպի սեղանա-

տունը:

Պուրս վագեցին ամուսինս և Վօլոգեան:

Ամուսինս ինձանից պակաս չվախեց, իսկոյն սպրդնեց  
և կցկառւը ձայնով ասաց:

— Պէտք է բժշկի ետևից գնալ... Պէտք է պառկեցնել:  
Դու վերաւորուած ես, Մանեա: Մաստիկ: Խօսիր:

— Գնդակը տարել է ձախ ականջիս թլթակը:

— Գնդակը գողալով ասացինք մենք:

— Երկիւղ չկայ: Դեղատանը ես կապել եմ:

— Դուք բժշկականութն էք, հարցրեց ամուսինս:

— Այս, հինգերորդ կուրսի ուսանող եմ:

Վօլոգեան առաւ քրոջ ձեռը և համբուրեց նրա ձակա-  
տը: Նրա աչքերը վառում էին: Թշերը կարմրել էին, բայց  
նա ոչ մի երկիւղի նշան չունէր:

— Ահա թէ ինչ քաջեր եմ ծնել ես, այն էլ երկու սեռի:

Մանեային մենք տարանք իւր սենեակը, բայց նա ան-  
դադար կրկնում էր.

— Ես՝ ոչինչ ես՝ ոչինչ: Սա անց կկենայ:

Ամուսինս ինդրեց ուսանողին՝ մասնակցել մեր ձաշն,  
բայց նա մերժեց:

— Պէտք է շտապեմ: Զդիաեմ ինչ եղան միւս ընկերներս:

Իմ յիշողութեան մէջ մնացել է նրա նիհար դէմքը,  
խոր ընկած աչքերը, փոքրիկ միրուքը և երեսի խալը: Նա  
ամբողջովին եռում էր: Նրա աչքերում շանթահարւում  
էին զայրոյթի կրակները:

Ամուսնուս և Վօլոգեային հեռացրի, ապա սկսեցի հա-  
նել Մանեայի շորերը:

Այսակա միայն՝ նա յանկարծ ցնցուեց, թեքուեց դէպի  
ինձ ու լաց եղաւ:

Բայց և իսկոյն նա ամօթ զգաց այդ տեսակ փոքրոգու-  
թեան համար:

Ես սիրտ չեմ անում, որ և է բանի մէջ յանդիմանել  
նրան և ասել թէ ինչպէս նա կարողացաւ զո՞ւ գնալ փո-  
ղոցային խառնիշփոթութեանը:

Եւ ստիպում էի, որ նա հանուի, որ ապա դնեմ ան-  
կողնի մէջ:

— Մայրիկ, ասաց նա՝ բարձի վրայից թեքուելով դէպ  
ինձ. մի չարանար ինձ վրայ, ևս չկարողացայ կանգ առնել,  
ևս յափշտակուեցի:

— Բայց դու աենում էի՞ր, որ պէտք է հրացան արձակին:  
— Չնդանի ինձ հասաւ եակեցս և ես վայր ընկայ: Եւ  
ահա, ի՞նչն է սարսափելին, նա ձեռներով ծածկեց երեսը.  
ես կէս ժամ ուշաթափուած ընկայ մի զիակի - մի սպա-  
նուած բանուորի վրայ: Այդ սարսափելի է:

Նա սկսեց դողացնել: Ես աւելի սաստիկ վախեցի և այ-  
մուսուս ուղարկեցի բժշկի եակեց:

Ամուսինս հոգով աւելի ընկճուել էր, քան թէ ես  
Ախր՝ կեանքի զօրեղ ըստէներին տղամարդիկ մեզանից թշյլ  
են:

## VI

Մենք՝ ամուսնոյս հետ մեր սովորական կեանքից դուրս  
եկանք թէ ինչպէս մարդիկ, թէ ինչպէս քաղաքացիներ և  
թէ ինչպէս ծնողներ:

Երեխաներին մենք ամենայն եռանդով դաստիարակեցինք:  
Մենք՝ մեզ վրայ պարտաւորութիւն վերցրինք՝ տանել այդ  
հոգիներին դէպի այն բոլորը, ինչ որ մենք համարեցինք  
բարութիւն և ճշմարտութիւն:

Իսկ այժմ ի՞նչ Ոչ թէ մենակ զրանց զիմնապիան:  
Այն սիստեմը, որ այսքան երկար ճնշեց մեր երեխաներին,  
տապալուել է, սնանկացել

Մենք էլ ենք մնանկացել Պէտք չէ շուռ ու մուռ դալ:  
Բանից երեաց, որ մենք էլ ենք կարողութիւնից զուրկի:  
Տանը մէջ մեր բնակարանում՝ դեռ մի կերպ մեր զրու-  
թիւնը պահպանում ենք: Այն էլ ինչ ծանապարհով:  
Նրանով, որ մենք թշյլ չենք տալիս նրանց ասել այն, ինչ  
որ բորբոքուել է նրանց մէջ ինչով որ բռնկուել է ամբողջ  
երիտասարդ Ռուսաստանը՝ սկսած գիտակցութեան հասած  
արհեստաւորից մինչեւ բարձր ինտելեկտուայի ներկայացու-

ցիչները, պառաւած՝ հինգերբող կուրսեցի ուսանողից մին-  
չեւ քաղաքային ուսումնարանի աշակերտաներն ու աշակեր-  
տուշիները:

Վօլոգեան և Մանեան դադարել են ինձ ամեն բան պատ-  
մելուց: Նրանք իրար հետ սկսել են շշունջներով խօսել:  
Վօլոգեայի գիմնազիան փակել են մինչեւ նոր կարգադրու-  
թիւն: Մանեան կարող է գնալ իւր ուսումնարանը, բայց  
նրան ես գեռ չեմ թողնում:

Երկու օր նա տաքութիւն ուներ, գիշերները զառան-  
ցում էր:

Վէրքը — մեծ բան չէ: Բլթակից կտրուած է մի փոքր  
կտոր, որ ամենեին նկատելի չի լինի: Բայց նա չի կա-  
րողանում ազատութիւն այն կօշմարից, երբ նա ուշաթա-  
փութիւնից յետոյ, իրան տեսել է ընկած մեռածի սառը  
մարմնի վրայ:

Դա կմնայ նրա ամբողջ կեանքի մէջ:

— Մայրիկ, ասում էր նա ինձ, իւր տաք ձեռով բըռ-  
նելով ինձ ու ամբողջ մարմնով ցնցուելով մայրիկ, ախր՝  
այդ վարմունքին անուն չունի: Սնմեղներին այդպէս սպա-  
նել փողոցում: Ախր ինձ էլ կարող էին այդպէս անել:  
Եւ այդպէս ծհծել մարակով թրերով, այդպէս գազանա-  
բար, ախր, գարշելի է:

Նրա աչքերը վառուում էին: Նա ամբողջովին խորին  
յանդիմանութիւն էր դառել:

Էլ միտք ունելո՞ր նրան խրաներ կարգալու, ցոյց տա-  
լու, որ ինքն է մեղաւոր, ինչո՞ւ է փողոցները չափչիւլ  
ու մանակցել ցոյցերին:

Առանց այդ էլ Մանեան և Վօլոգեան այնպէս են հաշ-  
ուում, որ իրանց ծնողները՝ եթէ այդ հրացանաձգութիւնները  
և այդ զազրելի կոտորածը չեն արգարացնում, բայց այն-  
քան էլ քաղաքացիական արիութիւն չունին, որ բարձ-  
րաձայն յայտնեն իրանց նողկանքը:

Վօլոգեան առաջին անգամն է, որ հօրը հետ «կոպիտ»  
է վերաբերում: Բայց իւր ժամանակին մեր մասին էլ այս-  
պէս են ասել երբոր մեզ թշյլ ենք տուել որ և է դէպ-  
քում հերքել մեր ծնողների կամ ուսուցիչների ասածը:

Դպրոցներից զրանց արձակել են, մեծ խայտառակութեան պատճառով:

Նրանք դաստիարակին ճգել են հաշտը, ժողով են կազմել և, յայտարարելով «քաղաքական բոյկոտ», խմբովին դիմել են դէպի հարեան կանանց զիմնազիան, դռները ջարդել են և երբ նրանց ներս չեն թողել հաւաքուել են բակը ու սկսել են գոռալ թէ՛ եթէ աշակերտուհիներին այս բոպէիս բաց չժողնեն, նրանք կկուրատեն պատշհանների ապակիները: Առաջին և երկրորդ դասարանցիները ամենքից կատաղի են եղել այնպէս որ պէտք էր մեծերը նրանց ձայնակցէին:

Բայսն է մտնում մի ինչ որ զազախ, բայց առանց զէնքի: Երբորդ դասարանցիներից երկուսը առաջ են գտվել և ատրճանակները մեկնում դէպի նա: Ղաղախն իսկոյն փախչում է:

Աշա հէնց այդ զէնքի համար էլ ամուսինս և Վօլողեան այնպէս տաք վիճեցին իրար հետ:

Վօլողեան սկսեց փող խնդրել՝ զէնք առնելու համար, բայց ամուսինս մերժեց:

Սկզբում՝ Վօլողեան խօսում էր աղերսանքի ձեռվ, բայց հայրը գոռաց.

—Յիմարութիւններ են: Այդ նրա համար, որ յեղափոխութեամբ խաղաս: Ոչոք ձեզ չի խօսացնիլ: Առաջին անկարգութիւններ անողը դուք էք:

Վօլողեան մի ակնթարթում գունատուեց ու դուրս թըռցրեց:

—Դու չարանալու իրաւունք չունիս, հայրիկ: Մենք որոշել ենք զինաւորուել: Մենք իրաւունք ունինք ինքնապահնութեան համար: Սև հարիւրեակները որսորդի նման ընկած են մեր ետեից, ինչպէս վայրենի զազանի ետեից: Հայկայում են մեզ: Մեզ անուանում են աղաւնությներ: Բայց մենք մեզ համար չենք դողում: Մենք պարտաւոր ենք պահակախմբեր կազմակերպել՝ աշակերտներին պահպանելու համար:

—Աշա ձեղ՝ հանդէս են եկել տխուր կերպարանքի ասպետներ:

Ամուսինս՝ իւր գոգիուը պէտք էր այդքան չընդարձակէր: Նա այդպիսով կատաղեցրեց երեխային:

Վօլոդեան բարձրացաւ մի տեսակ «ցցցով» ու դուրս գնալով, ասաց:

—Լաւ, ես ինձ համար Փիննի գանակ կգնեմ, բայց ես ինձ կենդանի չեմ ճգիլ ուրիշ ձեռքք: Այդպէս էլ իմացէք:

Եւ ահա նա նստած է իւր սենեակում կամ դուրս է գալիս այնտեղից առաւտեանից: Նրան հօ չի կարելի կողպէլ: Նա—մեծ է և զօրեղ: Ախր այժմեան երեխաները ընդունակ են ամենայանդուգն միջոցների զիմելու: Հաւանական է, որ նա արդէն դանակ է ձեռք բերել: Նա կամ կկտրէ իւր կոկորդը, կամ իրան կայրէ լամպացի նաֆթով:

Մենք՝ երկուսս էլ անզօր ենք: Այս կատարեալ մնանկութիւնն է: Եւ զրա մէջ ամբողջովին մեղաւորը մենք ենք: Նշանակում է, որ մենք մեր զաւակներին չենք կարողացել մի այնպիսի ոյժով գրաւել դէպի մեզ որ զիմնազիան չկարողանար այդպէս կաշկանդել:

Մեր ընտանեկան օջաղը, բարձր ոճով ասենք, նման է «կահաւորած սենեակների», որտեղ կենողները չեն ձանաշում իրար: Ճաշի ու թէյի ժամանակ մենք լուսում ենք: Եւ ես զողում եմ: Հլինի թէ հայր ու որդի էլի կրոնեն:

Որդիքս կարծես ծաղքում են, որ մենք՝ երկուսս վշտացանք, երբ յանկարծ լամպաները հանգան և ամբողջ բնակրանը մնաց խաւարի մէջ խարխափուած:

Նրանց համար այդ սիրելի էր: Նրանք հրաւում էին: Այդ—ամենակարող գործադուլն է: Այդպէս անարգանքով նրանք պէտք է վերաբերուին դէպի մեր հոգացողութիւնը՝ մաեղնի, նաֆթի, մոմի, իւղի, կաթնի և ուրիշ մթերքների մասին:

Ամուսինս՝ էլ չհամբերեց և ճաշի ժամանակ նետեց դէպի նրանց:

—Եթէ ուզում էք սուրբ Անտոնիոսի կերակրից օդառուիլ խնդրեմ շնորհ անէք: Գիտնականները բացարում են, որ քաղցից չի կարելի մեռնել, հարկաւոր է միայն մի բաժակ եփուած ջուր խմել և երկու կտոր շաքար ուտել:

Նաֆթը և մոմերը՝ մեղ մօտ՝ ամեն տեղ վառւում

էին, բայց ամուսնուս համար տիրալի էր պարապել հին ձեկի լուսաւորութեան տակ: Նա վաղ է զարթնում, ժամը եօթին և նրա համար՝ սեղանի պայծառ լուսաւորութիւնը դառել էր հոգեկան պահանջ:

Նո վարձել է տեղափոխուող մեքենան, որին կպյրած է սեղանատան լամպան:

Երէկ «ուվորիբը» եկաւ, որ այդ բոլորը յարմարեցնէ և կարգի բերէ:

Ես գրեցի «ուվորիբ», որովհետեւ դա այն արշեստաւորներից չեր, որոնց հիտ մենք ընտելացել ենք: Բայց նա աւելի նման է զիմնաղիան աւարտած մի երիտասարդի: Երկայն մազերով, փոքրիկ բեխերով, ու բլուզայով ու գոտով:

Նա խօսում է ինչպէս (ինտելլիգենտ):

Գործադուլի վերաբերմանը հս մի նկատողութիւն արի: Նա նայեց ինձ իւր թանձր յօնքերի տակից և մի առանձին զիբք տուաւ իրան:

— Քանի որ մենք գործադուլ չենք արել, ձեղ համար միւնոյն է, տիկին:

— Բայց անելու փորձ եղել է:

Նա մի ծուռ ծիծաղեց:

— Ընկերներս ինչպէս կվճռեն:

— «Ընկերներ» բառը նա արտասանեց համարեա թէ իւր ձեռք: Դա մի սրբազն դարձուածք է, որն այժմ պարտաւորական է բանուոր կուսակցութիւնների համար: Դա թարգմանութիւն է ֆրանսերէն «compagnon» բառի:

— Եւ դուք կհպատակուէք:

— Հապա ի՞նչպէս:

— Ախր մե՞նք ինչով ենք մղաւոր:

— Տիկին, այժմ ժամանակը չէ որոշելու թէ՝ ով է արդարը, ով է մեղաւորը: Առէք լրազերը: Գրաշարները գործադուլ են անում ոչ թէ մենակ իրանց պահանջների համար, այսինքն ուժ ժամուայ պարապմունքի և ուրիշ բաների մասին, այլ դա զուտ քաղաքական «բոյկոտ» է:

Այդ խօսքը նա արտասանեց դանդաղութեամբ և նկատելի ինքնադոհութեամբ:

— Լրազերը հօ մենակ ձեղ պէս բնակիչների համար չեն, նրանք հարկաւոր են այլ և մեր եղայրներին—բանուորներին, բայց, ահա, տեսնում էք, նստած ենք առանց լրազրական կերակրի: Այսպէս էլ ամեն բանի մէջ:

Ես չէրքեցի:

Ես յիշեցի այն համեմատութիւնները, որոնք ամուսինս սիրում էր կրկնել այն ժամանակները, երբ տեղի էին ունենում զանազան սպանութիւններ և գաղտնի միութիւնների ուժեղ քարոզներ:

Ինչ որ կատարւում է մեր հայրենիքում, նա համեմատում էր ցուլերի կոռուին:

Ցուլն այն բեժիմն է, որին պէտք է տապալի: Ցլամարտիկները՝ գաղտնի կոմիտէների հրամանները կատարողներ: Իսկ մենք՝ ինչպէս հանդիսականներ նստել ենք մի մեծ ամֆիթէատրոնի նստավանների և նայում ենք թէ՝ ի՞նչ է կատարւում կրկնում, որտեղ երեսում են՝ եթէ ոչ մարդկանց, բայց սպանուած ձիերի արեան լծտկները:

Բայց այժմ չի կարելի նստել բարձր յենարանի ետև, ուր որ չէր կարող բարձրանալ՝ ոչ ցուլը, ոչ աէգակիր ձիավարն, որն իւր տէզով ծակում էր նրա փորը:

Հարկաւոր էր մեզ՝ բնակիչներիս էլ մանել ասպարէզ:

Ոչ այսօր, այլ վաղը՝ միւնոյն «սև հարիւրեակները» որքան աւելի կատաղի կերպով պիտի ջարդեն մեր զաւակներին, մեզ էլ հանդիսաւ չպէտք է թօղնին, այլ մեզ էլ պէտք է մայթերի վրայ կանգնեցնեն և զուան:

— Դու ում կողմն ես. մե՞ր թէ «կրամօլնիկ»-ների:

Միթէ ևս իմ երեխանների աչքում չի՞մ տեսնում այս յանդիմանութիւնը:

«Մայրիկ» չի կարելի «ոչ այս» լինել «ոչ այն»: Դուք՝ հայրիկի հետ՝ Ձեղ աղատամիտներ էք հաշւում, ապացուցէք այդ:

Ախր ի՞նչ բան է աղատամիար՝ մինչեւ անգամ նրանց համար: Դա էլ միւնոյն «բուրժուան» է: Նա պէտք է կարգի կոչէ, նա ծունկ է չպատմ «սեպհականութեան» սրբազնն սկզբունքի առաջ: Բայց այդ բոլորն ով է պաշտպանում: Ոստիկանները, ժանզարմները, զրագունները և զա-

զախները: «Վերջնական հաշվումն էլ» մտրակներն ու հրացանաձգութիւնները:

Իմ գլուխն ամբողջովին շուռ է գալիս: Տանն ինձ այնպէս եմ զգում, իբր թէ պահուած եմ մի շարք ծանր յանցանքներ գործելու համար:

V

Այս միրաժ չէ, այլ իրական կեանք:

Ես և ինձ հետ մի շարքում կանդնած ամուսինս և զաւակներս, մի հրապարակի վրայ ենք, մի քանի հազար հոգուց բաղկացած ամբոխի մէջ:

Միթէ այս միենյն քաղաքն է: Ահա թատրոնը միենյն սիւները, միենյն բրօնզէ ձիերը, կառքի հետ՝ թատրոնի ճակատի վրայ: Զախ կողմից միենյն պատը, որի միւս կողմից երեսում են տների շարքերը, եկեղեցիների զլուխները և զանգակատները:

Ո՞վ է խօսում: Մի պրօֆեսօր: Նրա խօսքերը հազիւ են համառում մեզ: Բայց այդ միենյն չէ: Մենք զգում ենք, որ նա խօսում է, որ նա պարտաւոր, է խօսել: Լրուում են համակրանքի ձայներ: Պրօֆեսօրը զլուխ է խոնարհում: Մենք էլ գոչում ենք: Մանեան, գեռ ականջը կապած, օգում բաշլղի ծայրն է շարժում, իսկ Վօլոգեան—զլսարկը և՝ ամբողջովին կարմրած՝ գոչում է.

Կեցցէ աղատութիւնը:

Ամուսինս լուռ է, բայց ժպտում է: Նրա աչքերն էլ փայլում են: Նա ձեռին բռնել էր մի թերթ, որի վրայ նշանակուած է «չորս աղատութիւն»:

Նրանց տուել են: Չէ, նրանց առել են: Դա ողորմութիւն չէ, այլ իրաւունքներ, որ խլուած են փոտած րեժիմից:

— Մեր Magna charta libertatum, ասում է ամուսինս, ցըց տալով երեք յօդուածի վրայ:

Իսկ եթէ յանկարծ խարենք: Եթէ անդառնալի և էական ոչինչ չտանի:

Չէ, չեմ ուզում կասկածել նենդամիտ լինել: Այս բոլորը ստրկական զգացումներ են: Աղատ քաղաքացիները

ոչինչ չպիտի ունենան, բայցի հաւատից գէպի փայլուն ապագան և բայցի ցմի ըմբանումից՝ պաշտպանելու այն բոլորը, ինչ որ ձեռք է բերուած:

Կեանքիս մէջ առաջին անգամ ընկայ այդ տեսակ ամբոխի մէջ: Ո՞վ կարող էր մտածել թէ այսպէս բան կարող է պատահել ոչ թէ տասը տարի այլ հէնց տարի ու կէս առաջ: Ինչ որ բան ձնշում ու արբունքի է հասցնում:

Ես միշտ վախել եմ ժողովովի ահազին համախմբումից: Յիշում եմ: Կրեմլի և Զամոնկվորէչիայի հրավառութեան մի օր, ես ընկել էի պատի նման սղմուած մի ամբոխի մէջ, որի ծայրը հասել էր մինչև Նիկոլսկայա փողոցի վերջը: Այդ օրը մենք բարեկամների հետ ճաշեցինք «Սլաւեանսկիյ բաղար» ճաշարանում: Այդաեղից դուրս գալուց, մենք որոշեցինք ոտով անցնել մինչև Կրեմլ: Հանդէսի ժամը չիմանալով, մենք ընկանք այդ ամբոխի մէջ: Յիշում եմ՝ թէ ինչպէս ես երկիւղից սարսափած, հետեւ կով ընկերուհուս, նետուեցի գէպի մի անկիւն, որ ընկած էր Սինոդական տըպարանին մօտ գտնուող տան՝ դուրս ցցուած պատի մօտ:

Այնաեղ մենք կուչ եկանք և սպասեցինք, մինչև որ անցնի այդ շարժուող մարզկանց մարմիններից զցյացած հեղեղը:

Ամբոխի մէջ ոտնատակ դառնալը ինձ աւելի սարսափելի էր թւում քան կենդանի՝ կրակի մէջ այրուիլը:

Ո՞վ տեսել է Խօղինկայի զարհուրանքը, նա չի կարող շարսափել ամբոխի մէջ մահ ստանալուց:

Բայց այստեղ ինձ ոչինչ չէր շփոթեցնում: Կարծես ես ամբողջ էութեամբս յենուել էի այդ մեծաթիւ ամբոխին:

Եւ մենք առաջ էինք ընթանում, չիմանալով թէ ուր, ոչոքից էլ ոչինչ չհարցնելով:

Որդիքս սղմուել էին ինձ: Նրանք շարունակ կանչում էին և օդում ծածանում՝ մէկն իւր գլխարկը, միւսը բաշլղը: Ամուսինս մեզանից չէր հեռանում: Մենք երեխաների ձեռներից բռնել էինք: Մէջ տեղով գնում էին Վօլոգեան և Մանեան, իսկ նրանց աջ ու ձախ կողքերով—ես և ամուսինս:

Գնում ենք, գնում, բարձրանում ենք վերև, առանց իրար ճնշելու, առանց խլատումների: Միքամում էին՝ ոչ

թէ հինդ, ոչ թէ տասը, այլ մի քանի տասնեակ կարմիր գրօշներ ու գրօշակներ, որը պարզ, որն էլ զանազան մակաղութիւններով:

Վօլոգեան՝ այդ մակագրութիւնները կարգում էր հեալով Մանեան կրկնում էր և քրքչում... քրքչում էր ու կրկնում:

Իսկ ետեից մեզ հրում էր միւնոյն աշուելի ալիքը: Միշտ առաջ ու առաջ:

Փողոցի երկու կողմերից վերցնում էին թազաւորական՝ երեք-գունի գրօշակները, պատռում էին նրանց սպիտակ և կապոյտ շերտերը և դարձնում էին նրանց ամբողջովին կարմիր:

Ահա հասանք հրապարակին: Մի ուսանող բարձրացաւ լապտերի սեան զլուխը և նրա վրայ պնդացրեց կարմիր գրօշը: Պատշգամին է գուրս գալիս զօրավարը մի սպայի հետ և ինչ որ բան է խօսում: Ահա բարձր գոչումներ, ինչ որ բանի համար պահանջներ:

— Աղատել բանտարկեալներին. բացականչում է Վօլոգեան:

Նրանք երկուսն էլ՝ քրոջ հետ մղւում են դէպի պատշգամը:

Ես և ամուսինս պահում ենք նրանց:

Դղրդաց ռուսական մարսելեօղը: Գլուխների ծովը նորից ծածանեց—և սահեց դէպ հեռուն, դէպի վեր:

Բանտարկեալների ետեից... Դէպի Բուտիրկա... ինչպէս արձագանք սաւառնում էր մեր առջելից ու ետեից:

Ես և ամուսինս նայում ենք իրար:

«Եյս ի՞նչ է» ոչ վախեցածի նման, ոչ էլ ուրախացածի՝ հարցնում է նա ինձ աչքերով:

— Բաստիլիայի առումն է. ուրախ ձայնով ասում է նա:

Մեր երեխաները խորին ոգեւորութեան մէջ էին, Վօլոգեան բռնել էր քրոջը ու մղում էր առաջ: Մենք նրան պահում էինք: Ես աղաչում էի մնալ մեզ մօտ: Ամուսինս էլ բռնել էր Մանեայի մէջքից ու պինդ պահելով, շարունակում էինք զնալ:

Հրուենք դէպ առաջ... այնտեղ Ստրաստնոյ վանքի մօտ...

ապա գնանք. ասաց նա երեխաների զլիսի վրայից:

— Զէ, հայր, ամօթ կլինի փախչել գոչեց Վօլոգեան:

Մա՛ էլ այն փափկասուն, հեղ մանուկը չէ, այլ աղատութեան զինուոր: Նրա զլիսարկը ծոծրակի վրայ է, վերարկուի կոձակներն արձակուած, ձեռն էլ մի փայտ է ձրգել՝ ծայրին կարմիր փալասի կտոր: Նա երգում էր ուսական մարսելեօղը:

Եւ ես ու ամուսինս զգում էինք ամօթ: Եւ էլ չէինք ուզում գէպի գուրս մղուել կառք վարձել ու երեխաներն առնելով, տուն զնալ:

Որքան զնացինք մենք—չգիտեմ: Ժամանակի ու տարածութեան համար մեր միաքը կարծես մեռել էր:

Ինչպէս տարօրինակ է: Եյս ազմուկների արանքում ես յիշեցի մեր՝ փիլիսոփայութեան պրօֆեսօրի դասախոսութիւնները կուրսերում, երբ նա խօսում էր Կանտի մասին և զարգացնում էր այն միաքը թէ՝ ժամանակը և տարածութիւնը - մեր մարգկային երեակայութիւններն են, բայց էապէս նա չկայ ահեղերքի կեանքի մէջ և նրա համար, ով որ համարում է նրա ստեղծողը:

Մենք անցել էինք բաւական ճանապարհ: Գլխների ծովը գեռ անկանոն շարժւում էր: Ահա հեռուից երեսում են բանտի պատերը: Լուսում են ամբոխի աղաղակները: Կարծես թնդանօթի ձայներ լինին:

Ոտներիս թուլութիւնը ես սկսում եմ զգուլ: Աչքերիս առաջ քողեր են բարձրանում, բայց ես աներեակայելի ծիգ եմ գործ զնում, յենուում եմ Վօլոգեայի կռանը, նա ինձ տանում է: Մի քանի բռպէ ես, և ես կարող եմ ուշաթափուել: Եյս ժամանակ ինձ ոտնակոխ կանեն: Եյս երկիւղն՝ ինչպէս ելեքտրական զսպանուկ զուարթացնում է ինձ:

Եյնտեղ՝ առջեսում աղմուկն աւելի ստստկանում է: Երգեցողութիւն, ուրա... Յանկարծ միւս կողմից երեցան զագախները և անցան մի ուրիշ կողմ: Առջեկի շարքերն արդէն բանտի գոների մօտ էին:

Ամեն ինչ կանդ առաւ... թէ յետոյ ի՞նչ է եղել այդ ես չգիտեմ: Ես ուշքի եկայ մի ինչ որ պատի մօտ: Ինձ

ուշքի էր բերում ամուսինս: Մի ուսանող էլ ընկած էր ծնկներին: Նա բացարձակ վերարկուի մէջ էր, որի տակից երեսում էին նրա գունաւոր շապիկը:

— Իսկ որդիքս:

Անրանց յետ քշեցին. պատասխանեց ամուսինս դրժգունած, Ճակատը քրտինքով թայ: Գլխին գլխարկ չկար:

— Գնանք, որոնենք, գոչեցի և՝ ուժգնապէս ոտքի կանդնելով:

— Ո՞րտեղ նրանց գտնել ամսւնուս փոխարէն պատասխանեց ուսանողը:

Եւ, իւր ուրախութեան հոսանքը չզպելով, բացարկանչեց.

— Աղատել են... ամենքին: Լուռում է երկու հարիւր մարդ: Ի՞նչպիսի յաղթութիւն:

— Ուստաց Բաստիլիան առնուած է, ասաց ամուսինս, աշխատելով ժպտալ և ոգեսրել ինձ:

Կարծես հրաշքով մի կառք գտնուեց: Ճանապարհին ամուսինս ինձ պինդ բռնել էր: Կարծեմ ես մի անգամ էլ ուշաթափուեցի:

Շորերս հանել են, զրել են անկողնի մէջ և ես քնել եմ, ինչպէս սպանուած:

Երբ որ զարթեցի ու զանգահարեցի՝ ննջարանս վազեցին երեխաներս:

— Մայրիկ, մայրիկ, սիրելի...

Մանեան ընկաւ ծնկներին ու համբուրեց ուսերս, ձեռներս, ծնկներս:

Վօլոգեան էլ ընկաւ նրա կողքին: Յանկարծ նա զլուխը բարձրացրեց և կցկոուր ձայնով գոչեց.

— Բոլորին էլ արձակել են, և Բուտիրկայից և Տագանկայից: Տէր, Աստուած, մայրիկ, ինչպիսի ուրախութիւն: Նա չզիմացաւ ու լաց եղաւ:

## VI

Եւ դարձեալ զլիների ծով: Դարձեալ տասնեակ հազարաւոր ամբոխը անցնում է քաղաքի միջով՝ դէպի գերել-

մանատուն: Գերեզման են տանում երէկուայ շարժման անյայտ առաջնորդներից մէկին:

Մենք մեր կիանքի մէջ՝ առաջին անգամն ենք լսում նրա անունը: Ամենասովորական, ոչ ուստական անուն է: Ծանր երկաթով նրան տապալել էր մի «պահապան» գլուխապահ, որ պատկանում է այն հրօսակախմբերին, որոնք շրջում են խաչուառներով ու պատկերներով, երգում են օրհներդ, ծեծում են «ջհուգներին», ուսանողներին, զիմնազիայի աշակերտներին և բոլոր նրանց, որոնց համարում են ինտելլիգենտներ:

Ես և ամուսինս ուղեցինք երեխաներին չթողնել այդ թաղմանը մասնակցելու: Բայց այդ անկարելի էր: Եւ նըրանց մենք՝ ինքններս տարանք:

— Տեսնում ես, մայրիկ, իրար ընդմիջելով ասացին նրանք Ճանապարհին, ինչպիսի կարգապահութիւն է: Մի վախիր, նրանք չեն համարձակուիլ վրայ թուշել իրանց մտրակներով:

Ես էլ չի վախում ամբոխից. ոչ երգեցողութիւնից, ոչ մակագրութիւններից, ոչ էլ իրարանցումից, որ ամեն մի րոպէ կարծ էր սպասել:

Երեխաները զնում էին մեր առջեկից: Յկվբում նրանք շուռ էին գալիս ու պատմում էին մեզ՝ իրանց տպաւորութիւնները, վերջը լուցին: Նրանք ապշել էին ընդհանուր պատկերի վեհութեամբ:

Ես և ամուսինս՝ երբեմն կամացուկ՝ իրար յայտնում էինք մեր տպաւորութիւններից, որ ստանում էինք այդքան երկարատև ընթացքում:

Պոպէն հասկը էր, որ մենք էլ ստուգէինք մեր կը է դո՞ն: Այժմեան ձեռով «պլատֆորման»:

Մեզ համար այդ տարօրինակ և օտարութիւնում մեր արդէն գործ են ածում և մեր երեխաները:

Ահա մենք—հարիւր հազարաւոր ամբոխի երկու միկրոսկոպային մասնիկ: Նա մեզ մղում է: Բայց ախր մենք կամաւոր մասնակցեցինք այս հարիւր հազարեայ բողոքմանը:

Ի՞նչի դէմ:

Ասելի ձորառւթեան դէմ: Ի՞նչ վեաս, եթէ նրա միտասներորդ կամ շատ - շատ, մի հինգերորդ մասն է պարզ հասկանում թէ՝ իրանք ի՞նչու համար են կանցնած, ի՞նչ են ուղում տապալել յանուն ի՞նչի գնալ բացարձակ կռուի և զոհել իրանց կեանքը: Վեաս չունի:

Ես և ամուսինս ախր մեղ համարում ենք ինքնաձանալութեան հասածներ և մեղ վերագրում ենք բարձր ինտելիբենցիայի դասին: Իսկ այդ ինտելիբենցիային ուղում են հաշակել՝ իրեւ հասարակութիւնը ոչնչացնողներ: Անարգում են նրան, պարսաւում են, խլում են նրանից յաւիտեան ընթացքի մէջ գտնուած զաղափարների և բողոքների նշանակութիւնը, որ վառուեց նրանով, ահա ինչի որ մենք մասնակցում ենք: Բոլոր նրա արիւնոտ կամ անարիւն զոհերը, տանջանքները, մահուան պատիժները, աքսորները, գաժանակիր աշխատանքները, բանտերը, հալածանքները — բոլորը, բոլորը յանձնուում են ջնջելու:

Ո՞ւմնից:

Հէյց նրանցից, որոնք ղեկավարում են այս ցոյցը:

Մինչեւ այժմ այդպէս էր մատածում իմ ամուսինը: Աղպիսի հարցերը ինձ էլ յուզում էին: Եւ մեր իրեխաների մէջ արգէն հասել է այն արհամարհական վերաբերմունքը դէպի մեղ — պէպի պառաւած «ինտելիբենտներիս» որոնց՝ նրանք, տեսնում էք, ոչ մի բանով էլ պարտական չեն:

Ոչ միայն հայրենիքի ատելի անցեալին, այլ և մեղ բոլորիս և մեր առաջնորդողներին, մեր զաղափարներին, մեր սրբութիւններին — փականք:

Այդ բոլորը մենք խորհեցինք մեր մէջ: Եւ գնում էինք, գնում էինք, զբալով, որ մենք այստեղ ենք, ոչ ստիպուելով, ոչ թէ վախենալով երեխաների համար և նրանց բերինք մեղ հետ միասին, որպէս զի տանը մենակ մնալով, զժոխքի տանջանք չքաշեն: Կողպիլ նրանց չի կարելի: Ծնողական այդ տեսակ իշխանութիւն այլ ես չկայ զոնէ այն մարդկանց մէջ, ինչպէս, որ մենք ենք. մեղ նման սեռի հնացած մարդասէրներ և զաղափարականներ:

Այս, մենք գնում էինք այնպիսի զգացումով, որ կար-

ծես գարձեալ ընթանում ենք մի նոր Բաստիլիա վերցնելու: Մենք գիտէինք, որ այդ թաղումը կլինի կատարեալ «քաղաքացիական», առանց ծէսէրի, առանց ստիպողական եկեղեցական - սիմբոլիզմի, որի հետ առաջինը մենք՝ ամուսնուս հետ հաշտուեցինք: Վաղուց է, որ մենք մեղ ուղղափառ չենք համարում: Բայց և այսպէս չհամարձակուեցինք բացարձակ կերպով բաժանուիլ պետական — հոգեորական ձորառութեան հետ: Երեխաներին մլրտել ենք, ուղարկում ենք նրանց՝ խոստովանքի և հաղորդութեան, յանձնում ենք գիտնալիքական՝ փարաջաւոր չինովնիկներին, որ նրանք սովորացնեն, թէ նրանք՝ սրտի ցաւով և կոտրուած ամբողջ հոգեկան «ես»-ով՝ ի՞նչից պիտի աղատուին, երբ գիտութիւնը ցցյ կտայ իրանց թէ՝ ինչպէս պէտք է լուծել էութեան հանելուկը:

Մինում էր: Մեր շուրջը, հարիւրհազարաւոր ամբոխի մէջ, առջեկց, կողքերից ու ետեկց մերթ լուսում էին ու մերթ բարձրանում «յաւիտենական յիշատակ» երգի հզօր ալիքները:

Նա հնչում էր ինչպէս եկեղեցական հոգեհանդստեանը, բայց նա այդպէս յայտնում էր անջատումն այն բոլորից, որոնք հոգին պահել են ստիպողական հաւատի շղթաներում:

Մենք նոր էինք նստել ձաշի սեղանի մօտ: Ամենքս էլ սարսափելի կերպով քաղցած էինք: Ժամը իննից աւելի կլինէր:

Յովնածութիւնից՝ սկզբում ուտում էինք լուսութեամբ: Բայց յետոյ միանգամից սկսեցինք խօսել: Երեխաները գեռ մեղազրում էին ինձ, որ ես կէս ձանապարհին ստիպում էի վերագանալ: Միևնույն էր, մենք չէինք կարող մօտենալ զերեզմանին, չէինք կարող նոյն իսկ մանել զերեզմանտան դուռը: Մենք հանգիսի պոչումն էինք:

Ամուսինս գեռ ապշած էր համակրանքի այդ ստիճան մեծութեան, որ տրուեց աղատութեան զինուորին — զազա-

նային սպանութեան զոհին:

— Ոյժ, կրկնում էր նա, այն էլ ի՞նչպէս: Թող գաղափարի մի կայծ ընկնի նրա մէջ և նա իսկոյն կդառնայ անյաղթելի:

Էւ, կարծես քիչ վախեցած այդ խօսքերից, նա, դիմելով երեխաներին, աւելացրեց.

— Բայց պէտք է՝ գատողութիւնից զուրկ հօտ չդառնալու վաղել դէպ այնտեղ, ուր վազում են ուրիշները, այն էլ միմիայն տոգորուելով, ցոյցեր անելու:

— Զայրիկ, խօսեց Վօլոդեան, այդպէս թաղում գեռ չի եղել: Դու ինքդ էլ ասում ես: Այժմ խուլիգանները և ասե հարիւրեակ»-ները կզգան:

Մանեան ուզեց մի բան ասել ու յանկարծ բարձրացաւ աթոռից:

— Զանգահարեցին, ես գնամ, բաց անեմ, մայրիկ: Ես լսողութիւնս լարեցի: Ահա չիկաց փականքը: Դու-ռ բացին:

— Ո՞վ կարող է լինել կիստայն ասաց ամուսինս: Աղմուկն ինձ տարօրինակ թուաց: Բոնկուած յանկարծակի ձզայնութեամբ, ես էլ նյոնպէս վեր թռայ ու վազեցի դէպի հաշտը:

Սկզբում ես ոչինչ չշասկացայ: Կիսամութ նախասենեակումն էի, որտեղ վառւում էր պատից կտիսած փոքրիկ լամպն:

Մի ուսանող էր, բայց վերքը զլեի վրայ, շապկի կուրծքը բոլորովին բաց: Երկու ընկերները՝ մէկը քաղաքացիական հագուստում, միւսը պաշտօնական «տուժուրկացում» հէնց այլտեղ էլ զրել էին կահաւորակի վրայ:

Մանեան սարսափած նետուեց դէպի ինձ: Սպանել նույն շնչաց նա: Ամենքին սպանում են: Մայրիկ: Պէտք է նրան փրկել:

Ես կանչեցի ամուսնուս և Վօլոդեային: Վիրաւորուածին՝ շրու հոգով բերինք առանձնասենեակը և զրինք տաճկական, փափուկ կահաւորակին:

Ուսանողի ընկերներից մէկը գնաց բժշկի ետևից: Միւսն ինձ հետ միասին՝ սկսեց վերաւորուածին՝ ուշքի բերել:

Ամուսինս, երեխաները, աղախինը օգնում էին մեզ:

— Մենք ուրիշ ելք չգտանք, բացի այն, որ բերինք ձեր տունը: Եւ նողկալի սարսափ: Մեր ներկայութեամբ, կատաղած սե հարիւրեակները բռնեցին մեր ընկերներից մէկին, ձմռեցին նրան, արորեցին ոտքի տակ, յեաց սկսեցին աջ ու ձախ նետել ու զարկել քարոտ փողոցին և այդպէս՝ մինչև որ նա չգառաւ անձեւ զանգուած:

Նա զողում էր և գժուարութեամբ էր արտասանում բառերը:

Վիրաւոր ուսանողը աչքը բացարաւ և սկսեց ապշած՝ շրու կօղմը գիտել:

Մենք՝ որ և է կիրապվ փաթաթեցինք նրա գլուխը: Թրի հարուածը ձեղքել էր նրա գանդը՝ ձախ քոնքից փոքրինչ վերև: Արիւնն արդէն կանգ էր առել: Բայց մի վէրք էլ դեռ վզի վրայ կար՝ ծոծրակին մօտ:

Նա նորից ընկաւ մոռացութեան մէջ: Մենք հեռացինք և մի անկիւնում, ձնշուած սրտով կանգնած, շշնջալով խօսում էինք:

— Ձեղ վրայ որտեղ յարձակուեցին. Հարցրեց Վօլոդեան՝ դգունած, զրզուած ու բարկացու դէմքով:

— Դարան, ստոր դարան: Մենք հանգարտ գնում էինք: Մինչեանգամ չենք երգում: Մեր պահակներն առջեւումն էին: Չիմացանք, որտեղեց լսուեց հրացանի ձայն, ապա տեղաց գնդակահալութիւն, այն էլ ինչպէս այժմ ասում են, պաչկան երով, աւելացրեց նա հեզնօրէն:

Մի բոլորովին երիտասարդ բժիշկ բերին: Նա յայտնեց, որ վէրքը շատ երկիւղալի է, սպանում է ուղեղի բոլորութիւնն: Աւղարկեցին փակ կառքի ետեից: Երիտասարդներից մէկին բժիշկը թողեց իւր մօտ, իսկ մեզ ինպրեց դուրս գալ:

Մենք շարքով նստել էինք ընդունարանում ու լսում էինք:

Լսում էին վիրաւորի խեղտուած հեծկլտանքները: Ցետոց կցկտուր դարձուածքներ ու բացականչութիւններ:

Սկսուեց զառանցանքը:

Մանեան առաւ իմ ձեռը և մօտեցրեց դռանը: Մենք՝



երկուսս ընկել էինք նրա վրայ ու լսում էինք:  
Անկարելի էր ջոկել այդ խօսքերն ու բացականչութիւն-  
ները, բայց հէնց մենակ ձայները հողի էին հանում:

Եւ երբ զառանցանքը ընդհատում էր, վիշտն ինձ աւե-  
լի ձնշում էր, և ես ամբողջ էութեամբս գառել էի կա-  
րեկցութիւն:

— Նա կմեռնի, ասս, մայրիկ, նա կմեռնի. շշնչում էր  
Մանեան, ամբողջ մարմնով սարսակլով:

Ես լռել էի: Ամուսինս և Վօլոգեան անկիւնում նստած՝  
նշյնպէս լռել էին:

Եւ յանկարծ, կարծես թէ տեսիլք, աչքիս առաջ կան-  
գնած մի պատկեր. իմ Վօլոգեային տրոլում են սաքի  
տակ, ձգում են գէպի վեր և ան զարկւում է քարոտ  
փողոցին և այդպէս շարունակ՝ մինչև նա չի գառնում մի  
արիւնոտ, անձև զանգուած:

Սարսափիցը ես ստույ:



19

ԵՐԱ

ԳԻՒՆ Է 20 ԿՕՊ.

Յանկացողները պէտք է դիմն  
Թիֆլիզ՝ Գուստեմբերգ գրավածուանոց:

ԳԱՆԶԱԿ՝ Թարգմանողին՝ կամ Գարեգին

քահանայ Թումանեանցին:

Елисаветполь, Священнику

Տեր՝ Գարեգին Տումանյանց,

